

# ՊՈՒՆԿՏՈՒՄ ԱԽՏՈՐՈՇՈՒՄ. ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԱՑՔ ՄԵԹՈԴԻՆ ԲոՅՏՈՎ Ի.Վ.

Պրովոզիակ ՍՊԸ, Մինսկ, Բելառուս

Հանձնված է՝ 2/15/2013թ., ընդունված է՝ 5/07/2013թ.

Ներքին օրգանների և օրգան համակարգի վիճակի ցանկացած փոփոխություն արտահայտվում է մաշկի ֆիզիկական հատկության վրա: Այս դեպքում մաշկը հանդես է գալիս որպես մի առանձին օրգան համակարգ, որը հարմարվում է նրա կենսագործունեության փոփոխվող պայմաններին: Մաշկային ծածկույթը, որպես ավելի հասանելի օրգան, ավելի համապատասխան է սկրինինգային հետազոտությունների համար:

Պունկտուար (կետային) ռեֆլեքտորապիայում, որտեղ հետազոտության գլխավոր օբյեկտը հանդիսանում է մերիդիանային համակարգը, մաշկային ծածկույթի թեստավորված հատկությունները դասական չինական մերիդիանային անցումային շրջանում, ձեռք են բերում բացառիկ նշանակություն, քանի որ միայն օրգանիզմի մերիդիանային համակարգի վիճակի իմացության հիմքի վրա բժիշկը կարող է պացիենտին անհատական բուժում նշանակել:

Մենք առանձնացրել ենք մարդու մերիդիանային համակարգի հետազոտության երկու հիմնական ուղղություն՝ պունկտուար և սեզմենտար նեյրոֆունկցիոնալ ախտորոշում:

Մաշկի ֆիզիոլոգիական հատկության թեստային հիմքի վրա պունկտուարային ախտորոշումը ակուպունկտուարայի (ասեղնաբուժության) տեսանկյան շրջանակներից դնում է նպատակ՝ ֆունկցիոնալ համակարգի առանձին մասերի վիճակի որոշակիացում, բայց ոչ հենց բուն մերիդիանների վիճակի ախտորոշում: Պունկտուարային ախտորոշման ավելի հայտնի մեթոդներից է գերմանացի բժիշկ Ֆոլի մեթոդը:

Պունկտուար ախտորոշման բոլոր մեթոդների գլխավոր դրույթը Ֆոլի անվանեց՝ ինչ-որ համակարգի կամ ինչ-որ օրգանի ֆունկցիայի սահմանման անհնարինություն՝ միայն ակուպունկտուարայի թեստավորման մի տեսանկյունի հիմքի վրա, քանի որ մաշկի էլեկտրոֆիզիոլոգիական հատկությունները ինչ-որ կենսաբանական ակտիվ կետի շրջանում արտացոլում են ոչ թե ամբողջական համակարգի վիճակը, այլ միայն համակարգի ինչ-որ մի մասը: Ընդհակառակը, սեզմենտար նեյրոֆունկցիոնալ ախտորոշումն ուղղությունը մաշկային ռեակցիայի թեստավորման արդյունքներով մերիդիանների պրոյեկցիաներում տալիս են եզրակացություն՝ վերջիններիս և նրանց համակարգերի ընդհանուր ակտիվությունների մասին:

Սեզմենտար նեյրոֆունկցիոնալ ախտորոշման ավելի արդյունավետ մեթոդ է հանդիսանում դինամիկ սեզմենտար ախտորոշման մեթոդը: Դինամիկ սեզմենտարային ախտորոշման մեթոդը, դասական չինական մերիդիանների շրջանում, որպես մաշկային սիմպատիկ ռեակցիայի էլեկտրոդերմալ ակտիվության որոշակիացման թեստավորման միջոց, թույլ է տալիս կազմել ամբողջ մերիդիանային համակարգի օբեկտիվ պատկերը՝ նրա հնարավոր խանգարումների չորս մակարդակներով, միաժամանակ սահմանել օրգանիզմի ներքին համակարգի վեգետատիվ ռեգուլյացիայի բնույթը, որով էլ ուղղակիորեն պայմանավորվում է նրանց ֆունկցիոնալ ակտիվությունը:

Բացի դրանից, դինամիկ սեզմենտարային ախտորոշումը, որպես մարդու վեգետատիվ կարգավիճակի գնահատման միջոց, թույլ է տալիս սկրինինգային ռեժիմում, սահմանել օրգանիզմի ընդհանուր (էլեքային) տոնուսը, վեգետատիվ նյարդային համակարգի սիմպատիկ և պարասիմպատիկ բաժինների ակտիվության հարաբերությունը, մարդու մարմնի վրա մաշկային սիմպատիկ ակտիվության տիպիկ փոփոխություններով անցկացնել կենտրոնական և պերիֆերիկ նյարդային համակարգերի վնասվածքների նախնական ախտորոշում, սահմանել առանձին համակարգերի և օրգանների վեգետատիվ ռեգուլյացիայի բնույթը:

Վերջնական արդյունքում, դինամիկ սեզմենտար ախտորոշման թեստավորման արդյունքները, մի կողմից օրգանիզմում հանդիսանում են վեգետատիվ ակտիվությամբ ինքնուրույն տվյալներ, իսկ մյուս կողմից՝ բժշկի ձեռքն է տալիս հետագա ախտորոշման համար փնտրտունքի ուղղություն՝ օգտագործելով ավելի տևական, աշխատատար և թանկարժեք հետազոտություններ՝ ճիշտ ախտորոշման նպատակով:

Այսպիսով, դինամիկ սեզմենտար ախտորոշումը, որպես հետազոտության առանձին ֆունկցիոնալ մի մեթոդ, բժշկին թույլ է տալիս օրգանիզմում ֆունկցիոնալ տեղաշարժման հետազոտության հիմքի վրա անցկացնել օրգանիզմի ներքին համակարգի վնասվածքների ավելի վաղ ախտորոշում, նաև՝ մերիդիանային համակարգը, ինչպես նաև վերահսկել պացիենտի բուժման ցանկացած թերապիայի արդյունավետությունը: